ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏՈՒՆԸ։

Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութիւնը, Թումայեանների կտակած 30,000 ռուբլիով և պ. Լ. Սերգէյեանցի նուիրած 10,000 ռուբլի դրամով քաղաքի նուիրած ընդարձակ գետնի վերայ, Ստանիսլաւեան փողոցում բլրի գլխին՝ կառուցել է մի փառաւոր բնակարան, որտեղից երևում է ամբողջ քաղաքն ու ծովը։ Այդ բնակարանում աղքատները ստանում են ձրի բնակարան, այդտեղ են զետեղուած ընկերութեան ձրի հաշարանն ու աշխատանքի տունը իւր բոլոր բաժանմունքներով, այն է կօշկակարական, կազմարարական և այլն. ունի և յատուկ սենեակ երթեկ հիւանդների համար։

ԿԵՍԱՐԻԱՅԻ ՀԱՅ ՄԻՋՆԱԿԱՐԴ ԴՊՐՈՑԸ

«Բիւզանդիոն»-ից տեղեկանում ենք, որ Կեսարիայի ս. Կարապետ վանքում՝ թեմի առաջնորդ Տ. Տրդատ եպիսկոպոս Պալեանի աշխատութեամբ բացուել է մի նոր միջնակարգ դիշերօթիկ դպրոց նախկին ծխական դպրոցի փոխարէն։ Նոր կրթարանը պէտք է ծառայէ Փոքր Ասիայի այդ բազմահայ կեդրոնի հայ բնակչութեան արժանաւոր ուսուցիչներ և հոգևորականներ մատակարարելու։ Այս ցանկալի հաստատութեան համար արդէն կառուցուած է նոյն վանքին կից մի հոյակապ շէնք դասարաններով, ննջարաններով, ուսուցչաց սենեակներով, գծագրատնով, դեղարանով, հիւրանոցով, սեղանատնով, խոհանոցով, մառանով, լուացարանով, ծառաների սենեակով և այլն, շրջապատուած ընդարձակ բակով և գեղեցիկ պարտէզով։ Գովելի է Տրդատ սրբազանի, ինչպէս նաև Կեսարիայի հայ ժողովրդի եռանդը, որոնց նուիրաբերութիւններով կառուցուել է այդ մեծածախ շէնքը։